



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 6 ՅՈՒՆԻՍ, 2016

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՐՏՈՍ 136

ԳՈՂԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ

Գոհութիւն յայրնեցեք Տիրոջ, որովհետեւ բարի է.  
անոր սերը յաւերժական է:  
Որ ինք միայն մեծամեծ հրաշքներ կը գործէ.  
անոր սերը յաւերժական է:  
Որ իմաստութեամբ սրեղծեց երկինքը.  
անոր սերը յաւերժական է:  
Ջուրերուն վրայ հաստատեց երկիրը.  
անոր սերը յաւերժական է:  
Մեր դժբախտութեանց մէջ մեզ յիշեց.  
անոր սերը յաւերժական է:  
Մեզ փրկեց մեր սոսիսներէն.  
անոր սերը յաւերժական է:  
Գոհութիւն յայրնեցեք անոր՝  
որ կը կերակրէ բոլոր արարածները.  
անոր սերը յաւերժական է:  
Գոհութիւն յայրնեցեք երկինքի Աստուծոյն.  
անոր սերը յաւերժական է:

### ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

### ԱՊՈԹՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՄ ՈՒՂՂՈՒՄԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 13:1-13)



## ՄԷՐ (13:1-13)

Ի՞նչ կ'արժե եթե բազում շնորհներով օժտուած ըլլալ, բայց սեր չունենալ: Ահա այսպէս կը սկսի Պօղոս Առաքեալ 13-րդ գլուխը իր նամակին ուղղուած Կորնթացիներուն: Հարուած մը, որ գլուխ գործոց է ոչ միայն այս նամակին մէջ, այլ ամբողջ Նոր Կրակարանին, ինչպէս պիտի վկայեն մանակագէտները: Հարուած մը, որ հարուստ իր բովանդակութեամբ, գրական ու բանաստեղծական կառոյցով: Այս հարուածը եթե կարելի ըլլայ վերնագրել մէկ բառով՝ ՄԷՐ: Մեր իր ամենաբարձր հասկացողութեամբ: Մեր հանդէպ իր նմանին: Խօսքը քրիստոնէական սիրոյ մասին է: Մեր որ միայն Աստուծոյ ստորոգելին չէ, այլ Անոր սկիութիւնն է: Աստուած Մեր է, ինչպէս պիտի ըսէ Յովհաննէս Առաքեալ: Այս հարուածը կարելի է երեք մասի բաժնել:

1. Միտոյ անհրաժեշտութիւնը:
2. Միտոյ յարկանիշները:
3. Միտոյ անկորնչելիութիւնը:

## Միտոյ անհրաժեշտութիւնը (1-3 հմր):

Կորնթացիները օժտուած էին զանազան շնորհներով, բայց կը պակսէր հիմնականը, այս շնորհները լաւագոյնս օգտագործելու համար պէտք է ու անհրաժեշտ է ունենալ լաւագոյն շնորհը: Պակտող փարբը, շնորհը՝ սերն է:

Սկիզբը Պօղոս Առաքեալ կը թուէ շնորհները, որոնք խնդրոյ առարկայ էին համայնքէն ներս: Այդ շնորհները նաեւ կը համեմարէ ցոյց փալով թէ անոնք ուրիշ բան չեն եթե ոչ պարզապէս երեւոյթներ, եթէ այդ շնորհներուն չ'ընկերանար սերը, որպէսզի լաւագոյնս արտայայտուի ու լաւագոյն արդիւնքը փայ:

- ա. Հրեշտակներու լեզուներ խօսիլ առանց սիրոյ կը նմանի.-
1. Պղինձէ շեփորի, որ կը հնչէ.
  2. Ծնծղայի, որ կը դողանջէ: Այսինքն պարզապէս ձայն հանող:

բ. Մարգարէութիւն ընել.

գ. Խորհուրդներու խորքը թափանցել.

դ. Հասնիլ ամբողջական գիտութեան.

ե. Լեռներ փեղափոխելու չափ զօրաւոր հաւաքը ունենալ.

զ. Բոլոր ինչքերը աղբարներու փայ.

է. Մարմինը կրակի մարմնէլ, նահապակութիւն. Ոչինչ կ'արժե եւ ոչինչով կ'օգտուի, որովհետեւ մարդու մը կեանքին չափը ոչ թէ ինչ ունի, այլ՝ որքան է իր սիրոյ չափը: Որովհետեւ ինչպիսի գործերը պ'ընենք, այդ գործերը չեն որ հաճելի են Աստուծոյ, այլ՝ այն ոգին որմէ մղուած կը կարարուի այդ գործը: Գործը իր արտաքին ձեւին մէջարժէք ունի միայն մարդոց քով, իսկ Աստուծոյ փնտրածը ոգին է, դիտարութիւնը: Նախ կարելի չէ այս վսեմ շնորհները ունենալ առանց սիրոյ: Բայց Պօղոս Առաքեալ այս արտայայտութեամբ ցոյց կու փայ սիրոյ գերազանցութիւնը եւ ըսել կ'ուզէ թէ ոեւէ շնորհքի մը արժէքը սերէն կը ծնի, սերէն կախեալ է, եւ ոչ թէ իր ներքին գերազանցութենէն:

## Միտոյ յարկանիշները (4-7 հմր):

Ապա կ'անցնի ցոյց փալու սիրոյ յարկանիշները: Ինչ որ պակտող երեւոյթն էր համայնքէն ներս, եւ որուն հակառակ վիճակը կը փիրէր: Որովհետեւ սեր ունեցողը կ'ըլլայ.-

1. երկայնամիտ. որ կը նշանակէ անարգանքները ու վիշտերը կը փանի առանց փոխադարձելու:
2. քաղցրաբարոյ. միշտ պարտրաստ բարիք ընելու, բոլորի հանդէպ ազնիւ:
3. չի նախանձիր.
4. չի գռռոզանար.
5. չի հպարտանար.
6. անպարզաճ վարմունք չ'ունենար.
7. միայն ինքզինք չի մտածեր.
8. բարկութեամբ չի գրգռուիր.
9. չարութիւն չի խորհիր.
10. անիրաւութեան վրայ չ'ուրախանար.

Հապա.

1. ուրախակից կ'ըլլայ ճշմարտութեան.
2. կը գիշի.
3. միշտ կը հաւարայ.
4. միշտ կը յուսայ.
5. միշտ կը համբերէ.

Հերաքրքրական են այս վերջին երեք բառերու գործածութիւնը: Պօղոս Առաքեալ կը թուի թէ այնպէս կը ներկայացնէ, թէ սէր ունեցողը ամէն ինչի կը հաւարայ, նոյնիսկ եթէ սեւ է, իբրեւ ճերմակ հաւարայ: Ընդհակառակը, այս վերջին երեք բառերը ձեռով սը գազաթնակէտը կը կազմեն: Կը նշանակէ «երբ ապացոյց չկայ, Սէրը լաւագոյնին կը հաւարայ: Իսկ երբ պարագան հակառակն է, այսինքն ստոյգ է եղած ամբաստանութիւնը կամ չար վկայութիւնը, կը յուսայ լաւագոյնին: Եւ երբ իր յոյսն ալ ի դերեւ ելլէ կը համբերէ, կը սպասէ լաւագոյնին» (Շնորհք Պատրիարք):

### **Միտոյ յաւիտենականութիւնը (8-13 հմր):**

Եթէ նոյնիսկ գերազանց շնորհները ալ կան, բայց միայն սերն է որ յաւերժական է, թէ՛ այս կեանքին համար եւ թէ յաւիտենականին: Որովհետեւ միւս բոլոր շնորհները միայն այս կեանքին համար են յետոյ պիտի վերջ գտնեն: Հանդերձեալին մէջ անոնց պէտքը չկայ:

Իսկ այդ շնորհները եթէ կան այնքան որքան շարէն քիչը իմանալու, «որպէս թէ լապտերը մութին մէջ: Երբ արեւը ծագի լապտերին կարիքը չկայ»: Առաքեալը իր ըսելիքը լուսաբանելու համար կ'օգտագործէ նոյնինք մարդու աճման եղանակը, որ հասունանալէ ու չափահաս դառնալէ յետոյ այլեւս կարիքը չկայ երեխայական բաներու: Նոյնպէս ալ մեր ծանօթութիւնը յաւիտենականութեան կամ Աստուծոյ մասին այնպէս է ինչպէս պղինձէ հայելիին մէջ մեր դէմքը, այսինքն՝ ոչ յսրակ, առաւել եւս մթին, մինչեւ կարարածը: Որովհետեւ մեր ծանօթութիւնները աստուածային ճշմարտութեանց մասին կը սրանանք մարդկային մտածումի, լեզուի, պարկերներու, օրինականներու միջոցաւ, որոնք չեն փար մեզի իսկական ճշմարտութիւնը: Սա կը նշանակէ, որ մեր ծանօթութիւնները միջնորդական են, անուղղակի, անկարար, շփոթ ու մասնակի: Հանդերձեալին մէջ պիտի ըլլայ անմիջականը, ուղղակին, կարարեալը:

Ուրեմն ամենակարեւորը հաւարքը, յոյսը եւ սէրը: Իսկ այս երեքին մեծագոյնը՝ սէրը: Ինչո՞ւ: Որովհետեւ փեսանք սերն է որ կը հաւարայ, կը յուսայ: Առաւել եւս հաւարքն ու յոյսը մարդկային են, մինչ սէրը՝ աստուածային: Աստուած պէտք չունի հաւարալու կամ յուսալու, բայց որովհետեւ Աստուած Ինք սէր է, ուրեմն կը սիրէ: Անոր համար ալ սէրը գերագոյնն է: